# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 օգոստոսի 2017 թվականի N 16

## *ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշումը.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավար Զարզանդ Գրիգորյանին 2017 թվականի օգոստոսի 9-ից տրամադրել նախորդ տարիների չօգտագործված արձակուրդ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2017 թվականի սեպտեմբերի 13-ից:
3. Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Գագիկ Շահգալդյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի օգոստոսի 4
գ.Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 օգոստոսի 2017 թվականի N 17

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի ԹԻՎ 10 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ   Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 27-ի <<Արձակուրդ տրամադրելու մասին>> թիվ 10 կարգադրության 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ <<2017 թվականի լրացուցիչ>> բառերը փոխարինել <<նախորդ տարիների չօգտագործած>> բառերով:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թ.օգոստոսի 8
գ.Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 օգոստոսի 2017 թվականի N 18

## *ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Կարինե Ֆիդանյանի համաձայնությունը.

## *Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ  Ե Մ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Ֆիդանյանին 2017 թվականի օգոստոսի 15-ից հետ կանչել իր ամենամյա արձակուրդից:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Ֆիդանյանի 2017 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը տեղափոխել 2018 թվական և միացնել 2018 թվականի ամենամյա արձակուրդին

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝* Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2017 թվականի օգոստոսի 14
գ.Արշալույս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 օգոստոսի 2017 թվականի N 17

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով.

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1.2017 թվականի սեպտեմբերի 15-ին ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի շենքում անցկացնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)՝ Աննա Գագիկի Առաքելյանի ատեստավորում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017 թվականի օգոստոսի 8
գ. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արշալույս,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2017 թվականի N 18

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ և 8-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչ Կարինե Գրիգորյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի 2017 թվականի օգոստոսի 23-ի թիվ 01/11/3468-17 գրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի վարչական սահմաններում գտնվող Կարինե Մուշեղի Գրիգորյանի սեփականություն հանդիսացող 04-021-0078-0029 կադաստրային ծածկագրի 0.8563 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասից 0.8217 հա հողատարածքը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի կատեգորիայի :
2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Գ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2017 թվականի օգոստոսի 25
գ. Արշալույս